

26 XI. 1903

ՄԻՆԻՍԿԻ ԵՄԻՍԿԻ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագրի՛ն՝ 10 ժր. սարկիսան

Հասցի՝
Ред. на в. "ВЕРАДЗНУТІОНЪ" — Руче
Réd. du jour. "VERADZNOUTIOUN" Roustchouk

«ՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՌԻՑԵԱՆ» ՄԱՍԻՆ

(շարունակութիւն եւ վերջ)

Մի կողմից խոշոր արդիւնաբերութեան օրըստօրէ աւելի աճելով եւ զարգանալով կապիտալիզմը կամայ կամայ մտնում է իւր գերի գիտակցութեան մէջ, այն է ունենալ երկրի մէջ իւր շահերին համապատասխան կարգեր ու օրէնքներ եւ այդ կարգերի ու օրէնքների վրայ իշխողի իրաւասութիւն, մինչդեռ այժման բացարձակ միապետական կարգերը իրանց շատ կերպերով ոչ միայն նպաստաւոր չեն կապիտալիզմի շահերին, այլ եւ նրանք կերտած են պաշտպանելու առաւելագուստ ազնւակամութեան շահերը իմաստ կապիտալիզմի։ Միւս կողմից խոշոր արդիւնաբերութեան զարգանալով օրըստօրէ զարգանում եւ ստանդանում է բանւոր դասակարգը, որ իւր կարգին կամայ կամայ հասունանալով ինքնաճանաչութեան է գալիս եւ իր բնութեան քաղաքական կուսակցութիւն ձեռք տում է ձեռք բերել ընդհանուր ձայնաւարտութեան իրաւունք, հասարակապետական կարգեր, որոնցով կարողանայ բարութիւնը անխախտելի վիճակը։

Այս երկու հանգամանքները իբրև խոշոր ազդակներ, ինչպէս նաև մի կարգ երկրորդական ազդակներ, ինչպէս են՝ ժողովրդի ստորին դասի ծայրայեղ չքաւորութիւնը, հարկերի ճնշող ծանրութիւնը, ազատական գաղափարների ծաւալումը, հարեան աւելի լուսաւորում եւ քաղաքացիական աւելի լայն ազատութիւններ վայելող ազգերի օրինակը, այս բոլորը եւ մի կարգ նման հանգամանքներ արդէն եկել են պարզ կերպով ապացուցանելու, որ ուսական կուսակցութեան ներկայ կարգերն եւ երկրում տիրող օրէնքներն այլ ևս մի աբսուրդ են ներկայացնում ժամանակակից պահանջների վերաբերմամբ եւ այլևս չեն կարող իրանց գոյութիւնը շարունակել, որ այդ կարգերն ու օրէնքները ո՛չ միայն անհամար

պատասխան են ներկայ պայմաններին եւ անպէտք, այլ եւ վնասակար եւ հակազդող առաջադիւժեան։ Եւ ինչպէս որ ամեն հնացած, փտած, ծերացած բան բնականաբար չը կ'որոշանալով գիմանալ նոր, թարմ, երիտասարդ եւ կենսունակութեամբ լի տարրերի առաջ, ընկնում, յալթլուում, ոչնչանում կամ գուրս է շարտում, այնպէս էլ ուսական կուսակցութեան ներկայ կազմակերպութիւնը այլևս կորցրած լինելով իւր կենսունակութիւնը եւ կատարած լինելով իւր տերը, պիտի կազմալուծուի եւ տեղի տայ նոր պահանջների համար պատասխան կազմակերպութեան։ Այո՛, հինը պիտի բնկնի, թէև յամառ ընդգիծաբարութիւնից յետոյ, եւ նրա տեղը պիտի տիրէ նորը։

Ահա այսպէս են նայում իւրերի ներկայ գոյութեան վրայ Ռուսաստանի զարգացած ժողովուրդների ազատամիտ կուսակցութիւնները, այս ոգով են տուրբաւած ամբողջ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատ յեղափոխականները, այսպէս են մտածում նաև հայ սոցիալ-դեմոկրատները — Հնչակեանները։ Եւ այստեղ զարմանալու ոչինչ չը կայ, զարմանալին այն կը լինէր, որ Հնչակեան կուսակցութիւնը, սոցիալիստ կուսակցութիւն լինելով հանդերձ, այլպէս մտածէր։ Այստեղ նաև մտայածին ոչինչ չը կայ. Հնչակեան կուսակցութեան ծրագիրը շատ լայն է, նա չի ամփոփում միմիայն ծածկահայաստանի հինգ վիլայէթների խնդրով, այդ վիլայէթների քաղաքական անկախութեամբ միայն, այլ նա ընդգրկում է ամբողջ հայութեան շահը, նրա քաղաքական եւ տնտեսական բարօրութեան գաղափարը։

Իսկ թէ ի՞նչ շահ է սպասում Հնչակեան կուսակցութիւնը իւր գործունէութեան ձեռնարկութիւնից, այդ շատ պարզ է եւ քանիցս բացառւած։ Յարիւրդ այլ ևս մի չարիք է ամբողջ Ռուսաստանի համար եւ նրա անկումը՝ մեծ բարօրութիւն Ռուսաստանում

ապրող բոլոր ժողովուրդների, ուրեմն նաև երկու միլիոնաչափ հայ ժողովուրդի համար։ Երկրորդ, որ Յարիւրդ կամ այլ խօսքով ուսական ներկայ քաղաքականութիւնը ամենամեծ արգելքներից մէկն է եղել եւ է՝ ծածկահայաստանի անկախութեան։ Այդ անվիճելի է. ինչպէս նաև անվիճելի է որ սահմանադրական կամ հասարակապետական Ռուսաստանի արտաքին քաղաքականութիւնը նոյնը չի մնալ ինչ որ է միապետական Ռուսաստանինը։ Բացի դրանից, սահմանադրական Ռուսաստանի հայ հրպատակները շատ աւելի դիւրութիւններ կունենան նպաստելու իրանց տաճկահայ եղբայրների ազատագրութեան գործին, քան ներկայումս, երբ ցարի կառավարութիւնը տաճկահայ յեղափոխութիւնը ընդունում է այնպէս, որպէս թէ այդ յեղափոխութիւնը իւր սեփական երկրի մէջ եւ իւր սեփական շահերին հակառակ լինէր։

Այո՛, Հնչակեան կուսակցութիւնը իւր գործունէութեան ձեռնարկի մէջ տեսնում է կրկնակի օգուտներ, սակայն այս մասին կանգ չեմ առնում, որովհետև այլ անգամ խօսք եղել է ովկրամութեան մէջ։ Պահանջը առիւծի գէմ պատերազմ է հրատարակել, ասում են մեր անճարակ հակառակորդները։ Այդ խօսքը մենք վերագրածնում ենք իրանց՝ աստիճաններին։ Վերջին տասն տարիների պատմութիւնը ամենահամոզեցուցիչ փաստերով մեզ սովորեցրեց, որ Հայկական խնդրի լուծման ամենազօրաւոր արգելքը, ինքը Ռուս պետութիւնն է, որ մեր անմիջական թշնամին միայն ծածկ կառավարութիւնը չէ, այլ եւ Ռուս, որ վերջինս ծածկահայաստանը իւր ապագայ սեփականութիւնը համարելով, Հայկական խնդիրը իւր ներքին խնդիրներից մէկն է համարում։ Արեւմտ քանի դեռ իշխում է ուսական ներկայ քաղաքականութիւնը, Հայկական յեղափոխութեան բոլոր ճիգերը, որքան եւ գերազանց լինեն նը-

րանք, անկարող են կորզելու ծածկահայաստանում թէկուզ մի թիզ գետին հայկական ինքնավարութեան համար, Թիւրքիայի եւ Ռուսիայի պէս հշոր պետութիւնների ճիրաններից։ Առել է թէ պահել հայկական յեղափոխութեան միայն ցարդ գործ դրած միջոցները եւ ունեցած ուղղութիւնը, նշանակում է ճանճի պատերազմ մղել երկու հզօր առիւծների դէմ, թէկուզ եւրոպական այս կամ այն մեծ պետութիւնը իւր համակրութեամբ կամ Բեռլինի դաշնագրութեան 61-դրոշմով իւր իրաւաբանական իմաստով խրախոյս հանդիսանային այդ ճանճերին։ Քանի որ այս այսպէս է եւ քանի որ ուսական ժողովուրդը այնպէս է կաշկանդւած, որ ոչ մի գրական գերջի կարող խաղալ ի նպաստ տաճկահայկական յեղափոխական գործի, ուրեմն աւելի լաւ եւ աւելի նպատակայարմար չէ՞, որ նա, ուսական միանայ իւր վիճակակից միւս ազգերի հետ 120 միլիոն խայթոցների թունաւորումով մահացնելու այն գաղանին, որը իւր ճերաններին մէջ ճգնում արեաքամ է անում եւ՝ մեզ հայերիս եւ՝ մեզ բաղդակից շատ ազգերի։

Մեր նոր գործունէութիւնը դաւաճանութիւն է համարում տաճկահայ գաղտի վերաբերմամբ։ Արդ, ո՞րն է դաւաճանութիւնը, ա՞յն, որ շարունակ զարկւենք անխորտակելի ժայռերին եւ սպառնք մեր ամենալաւ ոյժերը, թէ ա՛յն որ նպատակաւորմար կերպով փորենք ժայռի հիմքը եւ ցած տապալենք նրան։ Մի ուղղութիւն, սակայն, սրով չի կաշկանդում կամահամարակուսում տաճկահայ յեղափոխութիւնը, այլ աւելի զարկ է տրուում նրան ընդարձակելով կուրի ասպարէզը։

«Հնչակեանները իրանց ծրագիրը փոխել են», ասում են մեր տգէտ հակառակորդները։ Իրանցից շատերը գուցէ եւ կարգացած լինեն մեր ծրագիրը, բայց Հնչակեան կուսակցութեան ծրագիրը կարգալու բան չէ, այլ ուսումնասիրելու։ Մենք Հնչակ-

եաններս մեր գոյութեան սկզբից մազաչափ շնորհով մեր ծրարիրը, նա նոյնն է և կը մնայ միշտ: Գործունէութեան տեղն ու եղանակը, կուսի ձևն ու ծաւալը փոխած լինելով՝ ծրարիրը փոխած չենք լինում: Փամանակը սահում անցնում է իւր հետ բերելով նոր հանգամանքներ և նոր պահանջներ և ով ընդունակ չէ փամանակի պահանջները հասկանալու և այդ պահանջների համապատասխան փոփոխելու իւր գործունէութիւնն ու աակտիւան, նա կը հինանայ, նրան կը տիրէ անշարժութիւն և վերջիվերջոյ մահ: Հայկական խնդրի վիճակը այլ էր տասը տարի առաջ, այլ է այժմ: Ճարտիներն անցան: Հանգամանքները փոխեցին: Ինչպէս որ նոյնը չի մնացել ընդհանուր քաղաքական գրութիւնը, բնականաբար նոյնը չի մնացել և հայկական քաղաքականութեան գրութիւնը: Նոր գրութիւնները առաջ են բերել նոր պահանջներ և այդ նոր պահանջներին գիտակցող յեղափոխականը պէտք է նոյնպէս փոխէ իւր գործունէութեան եղանակը համապատասխան այդ պահանջներին:

Ես անցողակի կանգ առայ այն առարկութիւնների վրայ, որոնք մակերևոյթական լրջութեան դիմակով շարաւած էին, այլ ևս պէտք չեմ զգում խօսելու այն առարկութիւնների մասին, որոնք այդ մակերևոյթական լրջութիւնից էլ զուրկ են: Ինչպէս օրինակ՝ ոչնչակեանները հայեր չեն, նրքա կոսմոպոլիտներ են, նրանց հայրենասիրական ըզգացումը մեռած է (մեր ամեն դոյնի և ամեն տեսակի թշնամիների հին բայց միշտ նոր երգը), ոչովկասի հայութիւնը իսպառ կը ընչէի, Ատրպատականում հայերին կը կոտորեն (? ?), և կե-

ղեցին և կաթողիկոսութիւնն էլ ձեռքից կերթանա՜!!! և այլն և այլն, մի շարք անհեթեթ և տըղայամիտ բայց հասակաորի շարաններգութեամբ յերկուրած խօսքեր:

Մեր համակրողներին և ընդհանրապէս նոր գործունէութեամբ հետաքրքրողներին խորհուրդ եմ տալիս կարգալ ովեւրածնութեան մէջ պ. Թորոսի յօդուածները, որոնց մէջ շրտած են մի կարգ առարկութիւններ և զեղեցիկ կերպով բացատրած են այն երկրորդական օգուտները, որոնք ինքն ըստ ինքեան առաջ պիտի գան նոր գործունէութիւնից:

Թարգմ. Մյան

ՆԻՐԱՎԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՊԳԵՐ

(Հայ աղջիկներ)

Այ ու աւան ես հազել, կարմիր լաւա ես դառել. Ինձ ասա՛, գըլխիդ մատող. Բիւրեղոյ ո՞վ է կարել.

Աղբեր ջան, քեզ դուրբան, Մեր գիւման դու ես դու:

Չեզքը թըւանկ ես առել, Իւրչմանի դէմը կայնել, Սուրայի կըլոր մէջքըդ Փամփուշտներով ես ծածկել:

Աղբեր ջան,

Մէջքըդ կապել ես խանջալ, Դաստէն նըլխած է խալ-խալ. Կոթիդ, խանջալիդ մատող, Բո կերած կաթն է հալալ.

Աղբեր ջան,

Առիւծի պէս կայնել ես, Բեխերըդ ուրիւն ես. Սեւ, թաւ բեխերիդ մատող, Յաղթանակըդ տարել ես.

Աղբեր ջան,

(Հայ երիտասարդը)

Սիրտըս կը բախով լըցեք, Վըրժով բորբոքեցեք.

Աղբի քոր ու աղպըրտիք, Ահա՛, թուրք օրհնեցեք. Ուխտել եմ, զինուել եմ՝ Կըռուկու ձեզ համար, Մեռնելու ձեզ համար:

Երգիչ ՀԱԻԱՏ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԱՍՏՐՈՒԹՅՈՒՆ

— 30 —

4 նոյ. 1903 թ.

Դարաւոր ստախօսը այս սնկամ ևս չկարողացաւ ծածկել իր սուտը:

Յարի կառավարութիւնը օրցորելով կողոպտելով Հայ եկեղեցու կառավարներն ու գումարները, միևնոյն ատեն քաղաքակրթ աշխարհի և միամիտ մարկանց առջև ինքզինքանմեջ ցոյց տալու համար ասում է, թէ Հայ հոգևորականութիւնը անկարող լինելով պարտ ու պատշաճ կերպով սնորհներ, ինք աւելի լաւ ու արդարութեամբ պիտի կարգադրի և նպատակաշարժար կերպով գործադրի կարածների հասոյթները.

Սակայն, հակառակ այս յայտարարութեան, եղև լութիւնը գալիս է մեզ ասելու. ոայլ առակ լուարուք:

Չնայած այն հանգամանքին, որ այս տեղի կարածները և գուժմարները գրաւել են, սակայն դէպի լաւը ոչինչ չէ արած և ընդհակառակը մեր ազգ. հիմնարկութիւնների գրութիւնը շատ աւելի բարասական է քան առաջ. օրինակ, եկեղեցու երգեցիկ խմբին պիտի ուժեղ տալ փող չկայ, օրիորդաց զպրօցի համար փող չկայ, այս ինչին փող չկայ, այն ինչին չկայ. մի խօսքով, ամեն տեղ, այդ գումարները գըրաւած են և փող չկայ, փող,

փող՝ նոյն իսկ ընթացիկ փութրիկ ծախսերի համար:

Իհարկէ անզացի հայ ժողովուրդը գեռ ևս իւր իսկ միջոցներից գործը եղաւ է տանում վճարելով ուժեղները, հայթայթելով անմիջական պէտքերը, սակայն մինչև հ՞րը: Ամօթ չէ՞ Յարի կառավարութեան, օրցորելով գողանալուց յետոյ, զուրկ լինը պարտկելու համար ախաշկարա սուտ խօսել. եթէ իսկապէս վերի յայտարարութիւնը անկեղծ է, ինչո՞ւ գործադրութեան մէջ մտնել թերանում է: Ահ, ո՛չ, մենք շատ լաւ ենք ճանաչում գառնազգեստ գայլին և երբէք չենք ուղեր մի բոպէ այլևս մեզ խաբւած անտել: Ռուսական նենգամուտ լութիւնը բոպէսպէս անկեղծութեան չի կարող փոխել:

Արդեօք վերջնս հրապարակւած փաստերը բաւական չե՞ն պացուցանելու, որ մեր ամենամեծ և նենդ թշնամին հէնց ինքը՝ ռուս. Յարիզմն է, յանձին Յարի. արդեօք ժամանակը չէ՞ ըսել թէ, այդ ո՛րիստոնեայ աղբերի պաշտպանս կարծւած պետութիւնը հէնց ինքն է նրանց արիւնը դարչելիօրէն ծծողը:

Ռուսական պատմութիւնը չէ՞ ծածկւած արդեօք այնպիսի սեէշերով, որոնց մէջ ազգերի բընաշնչումը ներբողւած լինի:

Ահ, այդ սխտեմի արդիւնքը չէ՞ր, որ մեր զպրօցները փակւեցին, որ մեր բարեգործական և մարդասիրական հիմնարկութիւններն ու գայլերը խլեցին: Մեր զպրօցները փակւելուց յետոյ, իբր թէ մեր աղաքը պիտի կրթւէին ռուսական զպրօցներում, այլ սակայն մերիները փակւելուց յետոյ, ռուսական նոր զպրօցներ գրել թէ չը բացեցին, իսկ եղածներումն էլ չէ թէ հա-

Բ Ա Ն Ա Ս Ո Ւ Ր Ա Կ Ա Ն 23

ԱՆԻԾԻԱՆՈՒԹԻՒՆԸ
ՊՓՅ ԵՅԾ-ի
բարգլանեց Երանսերեկի
Ա. Տ-եան

ԱՆՀԱՏՆԵՐԸ ԵՒ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԸ

Որքան ճնշումը մեծ, բոնութիւնը՝ կատարի և գերութիւնը՝ նուաստացուցիչ է. այնքան աւելի խոտորէն պիտի պայթի ժողովրդային բարկութիւնը յեղափոխութեան օրը:

Յեղափոխութեան իրաւունքը, նոր գաղափարի մը ծնունդին այս անխուսափելի շարիքը, ճանչցուած է գրեթէ բոլոր մեծ խորհողներէն: Երէկուտան ապստամբներէն կազմուած այսօրուտան պուրժուակներն է միայն, որ կը համարձակի զայն ուրանալ, թէ եւ «յեղափոխութեան իրաւունքը իրենց բարբ սահմանադրութիւններուն հիմը ըլլայ» (Կօրան):

Մեր սերունդին ամենէն պղնիւ մարդիկը լիովին ընդունած են, որ իրաւագործի ճնշումներու համար սըր-

բազան պարտականութիւն մըն է ապրտամբելու անարդարութեան դէմ: Յեղափոխութիւնը, հակառակ իր յանձն ընթաց աղէտներուն, այն խորն է որ կը մտքէ ու կը գտէ ընկերութիւնը: Երբ քաղցը կը կրծէ ամբողջ եւ զայն կը կատարէ, երբ շարժարած ու ոտնակոխ եղած հիւղակներու բնակիչները կը լքեն իրենց խրճիթները եւ կը կանչեն իշուտութեան բոլոր ընկերակիցները բաժանելու աւարը, գարմանտու ի՞նչ կայ, եթէ անոնք գիմն գաղանային աբարքներու: Անոնք պիտի անցնին մեր դաշտերէն աւրելով, աւրջողիով բոլորը, որոնց համար պիտի կրնայ ըստիլ ինչ որ Աղիւշայի համար՝ «իրենց անցած տեղը այլ ես խառ չի բուսնիր»: Այն ապստամբները, որ կը խորհին աւելի վըրջ խնդրութեան մասին, քան թէ բարբ օրկու իրենց դրութիւնը, զոր միշտ իրենց ներկայացուցած են իրեանրաբարկութիւնը, պիտի արձակեն իրենց առւերքը մարտից դէմ, զորս պիտի նկատեն իրենց առապանքներուն կամարը հեղինակները:

Բարբոսկան ոչ մէկ օրէնք պիտի արդիւն գտնուի, գիտութեան ոչ մէկ զգացում պիտի կրնայ մարկ հրդեհուած ջանը: «Ճնշումը եւ ճնշողի

մէջ ոչ մէկ բարոյական համաձայնութիւն կարելի է. այս է իրենց վարդապետութիւնը: Մանասնոգ աս տրամարանական հեռուութիւն մըն է անխիշատանսներու համար, որոնք ճընշումը եւ փշուտութիւնը կը վերագրեն ո՛չ թէ միջավայրներու, պարագաներու եւ հաստատութիւններու, այլ քանի մը անհատներու բոնութեան և եսամոլութեան: Այն ատեն մեր գործողութիւնները կ'առնուորող բարոյական իսկ արդիւք մըն է այն պայքարին, որ մարք մարտը դէմ կը մղէ. անս թէ ինչո՞ւ համար անխիշատանսները բարոյական օրէնքը կ'առնուան «հարուստ մը ազատութեան դէմ»:

Մարդու սրտին խորը քնացող բարութիւնը կը խղզուի ամէն կողմէ ասակութեամբ ու կը բով եւ ո՛չ մէկ բարբ զգացում չի կատարու տիրտմիթով կամ գաղտնով զիտուած ձեւքը: Պուրժուակներն՝ պէպի երկինք վըրջէ՞ գողոց անգթութիւններու օրինակը ստուա. անխիշատանսները այս մասին կը հետեւին հաւատարմութեամբ անոր վարդապետութեան: Բործով բորբականող ոչ միայն բարոյականութեան օրէնքներու հակառակ է, այլ թաքթիքի սխալ մըն ալ է: Հպատակելու

զպացումը դեռ բաւական խոր է տկար եւ երկչոտ մարդկանց սրտին մէջ՝ չընորհիւ գարեւոր փառանգութեան: Իրենց մտաւորական և ֆիզիքական սոյժով այս վերջինները գերաւանցողները իրենց պեճուութեամբ և հարստութեամբ զանոնք հրապուրողներն են որ կը յարգուին և կը մեծարուին: Կուսքը, աստուած կամ միապետ, ունենալու պէտքը դեռ միշտ մարդկային բընութեան մէկ յատկութիւնն է: Այս կուսքին գահընկէց ըլլալէն վերջը չեն փոխուած այն պարագաները, որոնց արդիւնքն էր ան: Բայց զո՞ր մը շատ մարդկանց աչքին, որոնք չըպիտի կրնան բնա իրենց սխալէն բուժուիլ: Անոր արիւնը անօգուտ կերպով թափուած է, բան մը, որ ոճիք է. ատկէ զատ ամենէն լուրջ պայքարողները զլուտուած են այն մասնակցները մէջ, որ կը ընեն ցոյց տալով ժողովրդային խաւարուն իրենց հետամտած նպատակը, եւ իրենց կուսի բարոյականութիւնը:

Այսպիսի արարքներու սարսափը կը հեռացնէ մենէ ամբողջ, մենք, որ այնքան պէտք ունինք զայն գրասեւու, եթէ կուզինք յաղթել:

(Շարունակելի)

յերիս համար տեղ չկար, այլ նոյն իսկ ուսու երախտները փոքրոցներն են մնացել, անէճք թափերով նոյն իրենց վեհ, Յարի գլխին:

Տեղիս հայ օրիորդների գրգռուցը, որ մինչև փակելը ծաղկեալ գրութեան մէջ էր, նրանից յետոյ երբ կառավարութեան ձեռքը անցաւ, սղորմելի վիճակի է ենթարկուած: Հինգ տարի է կանոնագրութիւն է մշակուած և գեռ վերջնական լուծուած չի ըստացել, որովհետեւ պատուհաս Մի. նիտորութիւնը ջնջուած է այն... ինչ իսկապէս պէտք է և անհրաժեշտ:

Ժամանակ է, եղբայրներ, որ մենք ճանաչենք մեր իսկական և զգուշ թշնամին, պտտրատ գրուներենք առաջիկայ անհեղին օրերին...

Ժանիֆ

ՆԱՄԱԿ ՍՕՏԻԱԷՆ

15 նոյ. 1903, ՍՕՏԻԱ

Պ. Հրահատ կամարի բանախօսութիւնը և մանաւանդ Հրահատի կողմէն անցուցած լինելու մասին հարկաւորութեան շրջանում է դպրոցի անդամների 563 թիւին մէջ կոնակի ծածկանունով մէկը երկրէ անիմատ խօսքեր բերուած կարգ մը անկապ խնդիրներ մէջգրու գնելով:

Բայց կը հարցնենք նախ, ի՞նչ կապ կայ պ. Հրահատի բա...

ԱԻԵՏԻՍ ՆԱԶԱՐԻԿ

ՉԱՐԱԽՕՍ ԹՉՈՒԿԸ

(Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ ԵՒ Cie ՀԱՍՏԷԻՆ)

Ի՞նչ է ստույգ սոցիալական: Այսօր, այդ դէպքերից լինց - եօթ տարի վերջ, նա եկել եւ կրկնուած է նազըմի մեքենայութիւններով մեր գէժ ուղղուած ինչ ամբաստանութիւնը եւ այնքան ջանք է ցոյց տալիս, որ վեղատու ինքնուսուցիչներ, ջրգետի կեղծ ու շինուած պոստոններ արձակելով մեր գէժ, ստույգ է նաեւ, որ այդ «մեղադրանքը» չենք էլ փորձել ջրելու: Եւսկի կասկեք այն, որ կան «մեղադրանքներ» այնքան անհեղին ու տրեմար, կամ կեղծ ու ստոր, որոնց ո՛չ կարելի է ջրել եւ ո՛չ էլ պէտք է: Չեղբայրացի ֆրանսիացի նշանաւոր գործիչները փորձեցին արգիւք ջրել այն «մեղադրանքները», որ օր ու պիչեր թախուած էին նրանց գլխին: Ո՛չ Հէնց անցեալ տարւոյ յունիս ամսին Պարիզի Ազգային Պատգամ, պատուում իսկ Յրանսիական Հանրապետութեան նախագահ Լուրէին մի պատգամաւոր անուանեց «գող», - փորձեց արգիւք Լուրէին ստորանալ և պատասխանել անուղղակի կերպով գէթ: Ո՛չ, Զօլաները, Ժօրէնները, Կլեմանտները, Լուրէններն իրանց ազգի Առաքելականների հասցէին ունեն միայն մի պատասխան. - «Շունը հաշուած է՝ քամին ստույգ է»: Եւ այդ է նաեւ մեր պատասխանը մեր հայ Առաքելականին... Ուղղուած ենք սակայն

նախօսութեան և դաշնակցական հայագործին միջև, որ պ. յօդուածագիրը երբ է Հնչակեաններուն այս վերջինէն հայ չըրգնելին (ինչ որ սխալ է) հրապարակել է:

Պարոնը մեր յարգելի ատենախօսին համար կրէ թէ՛ «Հնչակոսակցութիւնը այնքան բարձրացուց: որ կարծես թէ եղբայրասպանները և կամ՝ շնչազար տարրերը իզուր վատնուցնեալ անք չըլլային»: Իրա՛ւ, որ ծիծաղելի տրամաբանութիւն: Տըլումար ըլլալու է մարդ, որ չի կըրնայ Հնչ. կոսակցութեան և Ալ. Փարիստներու միջև եղած վիթխարի տարբերութիւնը տեսնել: Արդէն ժողովի պահուած, ակնյայտնի պարզեց պ. Ատենախօսը այդ խնդիրները և եղբայրասպաններուն որո՛նք լինելը:

Արդ, պարոն կոհակ, կուզէք որ մեր միջև թշնամութիւն չտիրէ. լա՛ւ, մեր ցանկութիւնն է այդ, բայց որո՞նք էին որ Մ. կեղծանցի փախտողականներու համար համեմաշխարհար ներկայացում մը տալու մեր առաջարկը մերժեցին և ամէն միջոց ի գործ գրին անյաշուութեան մատնելու համար զայն: Թողունք այն անըտորագիր նամակները աս ու անոր ուղղուած սրտեց մէջ Հրահատի կողմէն հասցէին անուր հայհոյանքներ կային: Չենք խօսիր այն անաչնիւ միջոցներու մասին, որոնք գործադրուեցան ընտրութիւններու պահուն:

Կը կարծենք որ այսքանը բաւական է, քանի որ տեղւոյս

նրան արժանացնել պատուի եւ հայ հասարակութեան գնել դժբախտ դրութեան մէջ աւելի ծանօթանալու այդ կենդանական հետաքրքիր նմուշի հետ: Շարունակները ուրեմն մեր խոսքը նազըմական դաւերի մասին:

Ենթարկելով մի ստոր, նազըմական, դրամական ամբաստանութեան, մենք այն ջրեցիկները միջոցով, նախ Հնչակեան կոսակցութեան Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին (1896 թ.) ներկայացրինք դրամական հաշիւները, ապա վաստաւորաստանողին՝ յանձին իր մէկ արքանեակի հրաւիրեցինք Անգլիական դատի նոյն իսկ Լօնդոնում, նոյն թիւին: Դատաւարութեան միջոցին երեսան կիսու ու հաստատեց կրկու գրութիւն. - նախ, որ ամբաստանողը զանազան անխոստովանելի ինտրիգներով ստանձութիւններ էր գործել Հնչ. կոսակցութեան մէջ՝ նրան սպառնալով, որպէս և «Հնչակ» թերթին տիրանալու՝ այդ օրգանն իրաչափերին ծառայեցնելու համար. երկրորդ, որ դրամական ամբաստանութիւնը մեր գէժ հիմնովին գրպարտութիւն է: Իր ժամանակին անգլիական այդ գատաւարութիւնը եւ նրա որոշումները, ինչպէս և գատաւորի եւ մեր փաստաբանի գեղեցիկ ճառերը, սպառնացան ո՛չ միայն «Հնչակում», այլ և Լօնդոնի անգլիական բարձր թերթերում, որոնք վերոյիշած ճառերի վրայ հիմնւելով, մեզ ամբաստանողներին անուանում էին թիւրքաւարութեան սպէստներ: Այդ գատաւարութիւնն իր սրտուղեւորով,

հայ հասարակութիւնը արդէն տարիներէ ի վեր, փորձը միշտ աչքին առջև ունենալով, կազմած է իր գաղափարը ազգային յեղափոխութեան անուսով խօսող տարրի վերաբերմամբ:

Ամէն բանէ առաջ աչքը լուծիւն և ճշմարտութիւն. կը հասկնա՞ք, պ. կոհակ:

Մտակ

ՆԱՄԱԿ ԴՈՒՍԱՆԻԱԷՆ

ՍՈՒԼԻՆԱ, 16 նոյ. 1903

Այս օրերս տեղիս հայ գաղութի գլխուն պատուհաս է եղած Յակոբ Տէր Յակոբեան անուն աւարժան քահանան, որ 40-45 օր է որ տեղս եկած է:

Արդէն տեղս քահանայի պէտք կար, որով այդ անձը 60 ֆրանքով սկսաւ պաշտօնավարել՝ առջի մէկ օրէն պահանջելով զարգարուն մի անեակ կարասիներով մէկտեղ: Ասկից զատ, իր կոչումի հակառակ, նա փայտն էլ սկսաւ շարժել, աս ու ան ծեծել և հայհոյել իրեն հակառակողներին:

Չի գոհացաւ ասով այդ անպիտան քահանան և Թուրքիայէն բրտուրը Սուլիմա բերել սուկեց, որպէսզի կարգ մը հայեր արտեր լալ տեղէս: Հապա ի՞նչ անուն տանք այն ընթացքին, որով այդ անարժան քահանան կրկնեցին հասոյթն էլ կուզէ կառավարութեան յանձնել:

Մեր տարտը չէ՞ր բաւեր մե-

ուրեմն, Անգլիայում իսկ նրապարակային փաստ է: Միւս կողմից Հնչ. կոսակցութեան Պատգ. Ընդհ. Ժողովը քննելով ամեն հաշիւներ, գտանքանց ձեռք ու կանոնաւոր եւ միեւնոյն ժամանակ որոշեց ու հաստատեց արհաւել կոսակցութիւնից մեզ ամբաստանողին, ինչպէս և եղաւ («Հնչակ» N-0 18, սեպտ. 1896 թ.): Այստեղ մենք աւելորդ չենք համարում ասոյ ընդ Պատգ. Ընդհ. Ժողովի «Պաշտօնական յայտարարութիւնը» մեր աւած հաշիւները քննութեան ու վաւերացման մասին: Այդ զօկուէնտը լոյս տեսաւ «Հնչակ»ի հէնց նոյն, վերջ յիշած, համարում: Ահա նրա գլխաւոր հատածները. - «Կոսակցութեան նախորդ կենտրոնի պաշտօնական հրաւերով՝ ներկայ սկստեմբերին Լօնդոնում գումարեցաւ կուսութեան Պատգ. Ընդհ. Ժողովը, և ի գիտութիւն Հնչակ, կոսակցութեան Մասնաճիւղերին նա յայտարարում է, որ իր չորրորդ նիստում քննելով Հնչ. կոսակցութեան իննամեայ գոյութեան ժամանակամիջոցին ունեցած Մուտքի եւ Ելքի հաշիւները ներք Պատգ. Ընդ. Ժողովը գտաւ նրանց միջ ու կանոնաւոր: Յայտարարում է նմանապէս, որ նոյն նիստում Պատգ. Ընդ. Ժողովը հաստատեց նաեւ, որ Հնչ. կուս. իննամեայ գոյութեան միջոցին կոսակցութեան, որպէս և «Հնչակ», «Ապաւի» եւ «Գաղափար» պարբերական հրատարակութիւնների հիմնադիրներ ու վարիչներ պ. Աւետիս Նազարեթի և տիկին Մարիամ Նազարեթիանց իրանց սե-

զի, աս փորձանքն ալ եկաւ գրութեանում...

Պահանջ

ՏԳԻՏՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱՆՈՒԹԻՒՆԸ

III

Անցնինք հիմայ այն կէտին, որ սերտ յարաբերութիւն ունի մեր խրատըրին հետ եւ որուն լուսարանութիւնը պիտի գայ անգամ մըն ալ ապացուցանել որ պ. Վարդօր «Թէօրիսն» գիտական հիմն գործի է:

«Վերածնութիւն»ի թիւ 9-ին մէջ կը հարցնէինք պ. Վարդօրն թէ ի՞նչ կը նշանակէ «մեզ համար սիրելի է մարդ արարածը, ոչ միայն բանուորը, խօսքը: Եւ կաւելցնէինք թէ «նաղ արարածը խօսքը անամէջ ֆրազ մըն է միայն, որովհետեւ իրականութեան մէջ գոյութիւն չունի նաղ արարածը այնպէս, ինչպէս որ պ. Վարդօրն գլխուն մէջ կայ: Արդէն Չէրնիշէվսքի, ուսումնա իմաստասէրը, փայլուն կերպով փաստեց որ չկայ վերացական ճշմարտութիւն, ճշմարտութիւնը թանձրացեալ է: Ասով մենք կուզէինք միայն դուրս բերել մեր ընդդիմախօսին տգիտութիւնը այսպիսի «ոչ ժամանակակից» խնդիրներու մէջ:

Թող ընթերցողը ներածական լինի մեզ աւելի ընդարձակ խօսակցու այս մասին ցոյց տալու համար որ արդարեւ «ամէն, ամէն» պտագողը միշտ արժանի չէ արքայութեան:

Հասարակական դատակարգի մը կամ մարդկանց «քաթէօրիս» մը հոգեբանութիւնը, տրուած շրջանի մը մէջ, կ'որոշուի, կը սահմանուի (determiner) նոյն այդ դատակարգի շահերով և կը ծնի ու կը զարգանայ անտեսական յարաբերութիւններու հողի վրայ: Այդ հոգեբանութիւնը արամարանական եւ անխոտափելի արգիւք է նիւթախան պայմաններում, որոնք կը ծնին հասարակական կեանքի մէջ

փական միջոցներից ներքի են կուսակցութեան 18.709 ֆրանկ, միեւնոյն ժամանակ իրանց արդուան էլ միշտ լինելով իրանց սկիական միջոցներով:» - Ապա յայտարարելով, որ ընտրելով կուսակցութեան կենտրոնի անգամներ եօթ հոգի, Պատգ. Ժողովը նոյն զօկուէնտն ասում է. - «Պատգ. Ժողովը հարկ է համարում յայտարարել այդ առիթով, որ յայտարարել միաձայնութեամբ վերջնորդեցան անգամներ կենտրոնի՝ կուսակցութեանս կրկու հիմնադիրներ Աւետիս և Մարիամ Նազարեթի: Աւետիս հակառակ այդ վերջնորդութեան նազարեթիանցները տալով՝ երկու պնդեցին իրանց հրաժարականների վրայ կենտրոնի անդամակցութիւնից, և Պատգ. Ընդհ. Ժողովը անդամների միաձայն կրկնակի թախանձանքներից յետոյ միայն կարելի եղաւ արդի նրանց յետ անել սալ իրանց հրաժարականները: Մտորագրութիւն՝ նախագահի (որ այդ նիստում Հմայեով Սուչալու լեանն էր և Քարտուղարը Հնչ. կուսակցութեան Պատգ. Ընդհ. Ժողովի կողմից, 18 սեպտ. 1896:»

Այդպէս, գրանք նրապարակային իրողութիւններն և Աւետիսիանց չի կարող եւ իրաւունք չունեն անդամանալ այդ, Բայց նա յանկարծ երեսան է գաղիս եւ թաքուն ու գգնելի գիտաւորութիւններից մըն: Հարպարակային ու պատմական ճշմարտութիւնը ոտնակոխ անում...:

(Շարունակելի)

Ք Ր Օ Ն Ի Կ

Հ Ա Յ Կ Ե Ա Ն Ք Ե Ն

Յարի կառավարութիւնը հետըզհետէ սահմանափակելու վրայ է կողմնասահայուն արդէն սեղմուած իրաւունքները: «Մշակ», «Новое Обозрѣніе» եւ «Тифлисскій Листок» այլ և այլ պայմաններով դադարման դատապարտուած են:

Անպատեհի չէր աս այն կառավարութիւնէն, որ օր ցորակով աւազակի գերը ստանձնած՝ կողոպտելու ելաւ եկեղեցական հասոյթները:

Իսրայր մարդասիրական և այլ ընկերութիւնները խափանել յետոյ՝ ռուս բռնապետական կառավարութիւնը, բնական է, որ ազատ կարծուող խօսքն ալ բռնաբարէր՝ Մամուլի գլխուն լախտի հարուած մը իջեցնելով: Ժամանակին «Արձագանգ» էր որ կը դադրէր ընդ միշտ. իսկ հիմայ «Մշակ» է որ «Երկու ամսով» դադարման կը դատապարտուի իր սենցածովնասակարողութեան համար: Դէտ այն պարագային, երբ թուրք կառավարութիւնը Պոլսոյ Մամուլի գլխուն այսպիսի վճիռ մը արձակել ուզէ, «անպայման» յաւիտենական տարազը կը հազցնէ այդ խափանումին, որպէսզի ծեծադելի չըլլայ. իսկ ռուսական կառավարութիւնը... Ինչ, «Յունվար 15-էն» անդին, երբ «Մշակ» լոյս պիտի տեսնէ, միթէ այլ ևս պիտի դադրի՞ իր «վնասակար ուղղութեանէն» և կամ միաժամ կառավարութիւնը՝ արդեօք նախապէս կազմած իր ծրագրին մէջ՝ մինչև որոշուած օր մը ընտրած է այն կատակերգութիւններուն համար, զորս կը ներկայացնէ ճակատաբաց լուսաւոր աշխարհի առջև:

— Չնայելով սր ռուս կառավարութիւնը ամէն բանի միջոց իր սրտը կը դնէ կողմնասահայուն վերաբերմամբ, միև կողմէն ալ ազատ չի ձգեր ռուսական սահմանները պարզ թրքահայատակները, որոնք հուրէն ու սուրէն ազատած՝ քրիստոնեայն ու ուրաղապէս տէրութեան հովանաւորութեան տակ միշտ ենթարկուած են հալածանքի:

Այն թրքահայատակները որոնք բացի աղբային անցածութիւնէ, ռուսական վկայական չեն ունենար՝ իրաւունք չպիտի ունենան ապրելու ռուսական սահմաններուն մէջ:

Ինքքին գործերու նախարարութիւնը այս մասին խիստ հրահանգներ է տուած բոլոր պաշտօնատար անձնաւորութիւններուն, որպէսզի թիւրք հիւպատոսները կողմէ իրենց նպատակներուն տրուած վկայականները, որ երբեմն թուրքի մէջ տրուած անցածութիւններուն տեսքը ունին,

ռուսական վկայականի չընդթը կրելով օրինական հանգամանքներէ զերծ չըլլան, այլ ռուսական հիւպատոսներու կողմէ վկայուած ըլլան:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Բեթրապուրկէն «National-Zeitung»-ին կը հաղորդեն որ այդ տեղի դիւանագիտական շրջանակները խիստ մտառնջութեան մէջ են ուսանողներու մէջ տիրող յուզման պատճառաւ եւ կը կարծուի որ այս ձմեռ առանց անակնկալի չպիտի անցնի: Բարբոզանները այս մասին պաշտօնապէս հաղորդած են իրենց կառավարութիւններուն:

Վարչաւայի մէջ համալսարանի նախկին տնօրէն Աբուլ-թիւրի թաղման առթիւ ուսանողները ուզած են պակ մը դնել անոր գերեզմանին վրայ և դամբանական արտասանել: Ոստիկանութեան կողմէ եղած արգելքներուն պատճառաւ այս վերջինին և ուսանողներուն մէջ արինահսկ ընդհարում տեղի ունենանայ: Ուսանողները փայտերով և գաւազաններով կը յարձակին ոստիկաններուն վրայ և կը փայտեցնեն զանոնք, այնպէս որ քաղաքները օգնութեան կը հասնին ուսանողները ցրուելու համար, որոնցմէն 240 հոգի ձերբակալուած և բանտարկուած են:

— Ժէնէվի մէջ տեղը ունեցած է ժողով մը մտաւորապէս 300 ռուս, հայ և հրեայ ուսանողներու մասնակցութեամբ, ուր սրտուած է կոչ մը հրատարակել ուղղուած զուրիցերիական ժողովրդին բողոքելու համար Զուրիցերիոյ մէջ երկու ռուս ուսանողներու՝ Պարցեվի և Քրաքօֆի ձերբակալութեան դէմ: Քուէարկուած որոշման մէջ կըսուի որ այս ձերբակալութիւնը կատարուած է ռուս կառավարութեան կողմէ եղած դիմումներուն վրայ:

— Աւստրիա և Ռուսիա գեռչեն պատասխանած Բ. Դրան: Կը հաւաստեն որ այս երկու պետութիւնները պիտի պահանջեն իրենց ներկայացուցած ծրագրին առանց վերապահութեան ընդունուիլը: Հակառակ պարագային վերջնագիր մը պիտի ներկայացնեն Սուլթանին:

— Neue Freie Presse կը հաղորդէ որ Մակեդոնիոյ մէջ բարենորոգումները գործադրելու համար պէտք եղած միջոցները ձեռք պիտի առնուին մինչև այս ամսուան վերջը և նոր տարւոյ սկիզբը քաղաքական և զինուորական քննութիւն մեքենան պատրաստ պիտի ըլլայ գործելու:

— Նախարարութեան առաջարկութեամբ Սոպրանիէն 500 հազար ֆրանք քուէարկած է ինպատ Մակեդոնացի գաղթականներուն:

արդիւնաբերական ոյժերու զարգացման շնորհիւ: Որոշ հասարակութեան անտեսական կազմէն ծագում առնող դատակարգային կուռի հետեւանօք կը փոխուի դանդաղ կամ արագ կերպով այդ կազմը: Ատոր հետ կը փոխուի ու կը ծնի հասարակա-քաղաքական խռովի հոգեբանութիւնը, որ բնականաբար դատակարգային կըլլայ: Ուրեմն ատկէ կարելի է եզրակացնել որ բրտէզաբիւթ դատակարգի զգացումները, մասնաձեւերը ու ձգտումները կը հակաման մասնաձեւը պորթուգալիայի զգացումներուն, մասնաձեւերուն եւ ձգտումներուն, ինչպէս որ այս վերջինին հոգեբանութիւնը կը հակասէ ազնուական դատակարգի հոգեբանութեան և հակառակը: Օրինակի համար, գործաւորներու համար աւելի հաճելի ու ցանկալի բան չկայ, քան արդիւնաբերական միջոցներու հասարականացումը: Ասի որ բրտէզաբիւթի համար ամենէն մեծ երջանկութիւնն է, պորթուգալիայի համար ամենամեծ ապերջանկութիւնն է:

Ուրիշ օրինակ մը: Բանուոր դատակարգը անհուն բերկրութիւն կը զգայ. անոր զգացումները կը թռին, կը սաւառնին յեղափոխական բարձր միջնորդին մէջ, երբ Մայիս 1-ին իր միջազգային համարաշխարհիւնը կը յայտարարէ պորթուգալիայի հետ պորթուգալիա կը դողայ, կը սարսռի, անոր հոգին կը քարանայ, մէկ խօսքով ամենամեծ տհաճութիւն կը զգայ տեսնելով բրտէզաբիւթի փառատը յաղթական ցոյցը եւ մտաբերելով իր մասնաւոր սեփականութեան մտաւորութեան մասնացումը:

Ուրիշ օրինակներ մէջ բերել աւելորդ է: Արդէն վերոյիշեալներէն ակնհայտ կը տեսնուի որ հոգեբանութիւնը որոշ հասարակութեան և որոշ էրօխար մէջ դատակարգային է:

Հոս պէտք է մասնաշնչել այն ճշմարտութիւնը որ հասարակական դատակարգի մը չքացումով շահնետանար նաեւ անոր հոգեբանութիւնը, որ զեռերկար ատեն շարունակ կը սիրապէսէ մեկտրուել և վերջիվերջոյ դատադորեն, անզգարար սեղի կուսայ նորին:

Այս բոլոր ըստածներէն կրնանք հետեւեցնել թէ մանրապորթուգալիան գլխիկը կընայ «սիրել» իր դատակարգին (որուն շահերուն դեռ ինք ալ ըմբռնած չէ) «մարդ արարածները», իսկ երբէք բանուոր դատակարգի «մարդ արարածները»:

Վարդօին «սիրել մարդ արարածը» կը նշանակէ նաեւ տարուբերութիւն արատադատակարգային հասարակութեան մէջ (ըսինք որ մանր-պորթուգալիան իտէօլօքի համար գոյութիւն ունի միայն անբաժան «ժողովուրդ»): Բայց քանի որ հասարակութիւններու միջև չեւ այսօրուան պատմութիւնը ուրիշ բան չէ բայց եթէ դատակարգային կը ռուս պատմութիւն, ուրեմն առանց դատակարգի հասարակութիւն չկայ: Հետեւաբար չկայ նաեւ արտադատակարգային հոգեբանութիւն: Անա ինչո՞ւ համար մինք կըսենք՝ ամեն զգացում իւր ժանանակը ու մարդիկը ունին:

Է՞ ուրեմն, պ. Վարդօ պիտի չարունակէ՞ քարձեալ «սիրել ամէն մարդ արարածը, ոչ միայն բանուորը»: Բայց մենք կը կասկածինք որ սօցիալիստներուն գրածներէն բան մը կարենաք հասկնալ: Սակայն չկարծէք թէ ձեզի համար կը գրեմ...

(Վերջը յաջորդ թիւով)

— Վերջին ժամանակները Պուլկար կառավարութեան ըրած շինուորական ծախքերուն գումարը կը հասնի 30 միլիոն ֆրանքի:

Մօտերս նախարարութիւնը պիտի առաջարկէ Սօպրանիէին վաւերացնելու միայն իր պատասխանատուութեան տակ եղած այսքան խոշոր գումարի մը ծախսը:

Տարակոյս չկայ որ Ստամբուլի խոստան մամուլը — Երևակալ խանները պիտի փութան ձեռնարկ քուէարկութեամբ պատասխանել իրենց եղած առաջարկին:

Պետական հասոյթներու անհաշիւ վատնումը պիտի փութացնէ ֆրանսական նոր տագնապ մը (որով արդէն կը տառապէր Պուլկարիան վերջին ժամանակներս) ատով աւելի սուր կերպարանք պիտի ստանայ արդէն գոյութիւն ունեցող և քրօնիքական դարձած տնտեսական տագնապը:

Պուլկար պորթուգալիան փոխանակ օգտուելու վերջին դէպքերուն մատակարարած դատէն, կը շարունակէ ձգտել անիրականանալի հազարային իտէալներու իրագործման, ձգտում մը, որ կրնայ ճակատագրական ըլլալ Պուլկար աշխատաւոր ժողովրդի շահերուն համար:

— Ֆրանսական ծեղակոյտը արդէն ընդունած է այն առաջարկութիւնը, որուն համեմատ միջնակարգ կրթութիւն տալու իրաւունքն կը զրկուին կրօնական միաբանութիւնները:

Կը խնդրուի բոլոր յօդուածագիրներէ չի դառնալ անձնականութիւններու շուրջը, այլ լոկ իրողութիւններ պատմել և գաղափարական հողի վրայ դնել վիճաբանութիւնը կամ ընդդիմախօսութիւնը:

ՈՒՇԱՆՈՒԹԻՒՆ

Ամերիկա երթալ փափաքողներուն կը ծանուցանեմ թէ՛ պատրաստ եմ զիրենք ներկայացնել Վիէննա գամուող ընկերութեան մը, որ ճամբուն բոլոր ծախսերը իր վրայ առած, միլիոնը 210 Բրաւիլ usանալով՝ ճամբորդը կը հասցնէ Վիէննաէն Նիւ-Եօրք, ամէն դիւրութիւններ ընծայելով անոր:

Օտար քաղաքներէ դիմողներն ալ կրնամ նամակով գոհացնել:

Թադէոս Քալէճեան
Հասցէ՝
T. Kafédjian
Roustchouk (Bulgarie)

Отговорникъ: Степанъ Г. Степанянь
Печатница Б. Н. Малджиевъ—Русе